Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 316-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ հորիզոնական մոնիթորինգի համակարգից օգտվելու հնարավորություն ունեցող կազմակերպությունների գործունեության ոլորտներն են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունության տեսակների դասակարգչի՝ հետևյալ ծածկագրերին դասվող գործունեության տեսակները՝

NN ը/կ	Ծածկագիրը	Գործունեության տեսակը
1.	07	Մետաղական հանքաքարի արդյունահանում
2.	11.01	Ալկոհոլային խմիչքների թորում, բազմաթորում և խառնում
3.	12.00.2	Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
4.	35.1	Էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում
5.	35.23	Գազամատակարարման համակարգի միջոցով բաշխվող գազի վաճառք
6.	36	Ջրի հավաքում, մշակում և բաշխում
7.	61	Հեռահաղորդակցության ծառայություններ
8.	62	Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից: